Center For Educational Research & Consulting

ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍ

Ամերիկյան կրթական հետազոտությունների ասոցիացիա
Հաստատված Ամերիկյան կրթական հետազոտությունների ասոցիացիայի խորհրդի կողմից
Փետրվար 2011թ.

ԷԹԻԿԱՅԻ ԿՈԴԵՔՍ

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը իր գործունեության մեջ առաջնորդվում է ներկայացված Էթիկայի կոդեքսով

CERC © 2015

Center For Educational Research & Consulting

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական 4
Ընդհանուր դրույթներ 4
Սկզբունքներ 5
Սկզբունք Ա: մասնագիտական կարողություն 5
Սկզբունք Բ: Բարեվարքություն 6
Սկզբունք Գ. Մասնագիտական, գիտական, կրթական պատասխանատվություն 6
Սկզբունք Դ.Հարգանք մարդկանց իրավունքների, արժանապատվության և տարբերությունների հանդեպ 6
Սկզբունք Ե. Սոցիալական պատասխանատվություն 7
Էթիկայի ստանդարտներ 7
1. Գիտական, կրթական և մասնագիտական ստանդարտներ 7
2. Կարողություն 7
3. Փորձաքննության օգուտը և վնասը 8
4. Կեղծիք, սուտ և գրագողություն 8
5. Վնասից խուսափում 9
6. Խտրականության ժխտում 9
7. Շահագործման ժխտում 9
8. Ոտնձգություններ 9
9. Աշխատանքային որոշումներ 10
9.01. Աշխատանքային արդար պրակտիկա 10
9.02. Աշխատողների իրավունքներ 10
10. Շահերի բախում 10
10.01. Մասնագիտական ստանդարտների կապվածություն 11
10.02. Հայտնաբերում 11
10.03. Խուսափում անձնական շահերից 11
10.04. Աշխատավայրում որոշումների կայացում 11
10.05. Աշխատավայրից դուրս որոշումների կայացում 12
11. Հանրային հաղորդակցություն 12
11.01. Հետազոտողների հաղորդակցություն 12
11.02. Հայտարարություններ այլ մարդկանց կողմից 13
12. Գաղտնիություն 13
12.01. Գաղտնիության պահպանում 13
12.02. Գաղտնիության սահմաններ 14
12.03. Գաղտնիության և դրա սահմանների քննարկում 15
12.04. Ինֆորմացիայի հնարավոր օգուտների սպասում 15
12.05. Գաղտնի ինֆորմացիայի էլեկտրոնային փոխանցում և պահպանում 16
12.06. Աղբյուրների անանունություն 16
12.07. Նվազագույնի հասցնել անձնական տիրույթ ներթափանցումը 16
12.08. Գաղտնի ինֆորմացիայի պահպանում 16
13. Տեղեկացված համաձայնություն 17
13.01. Տեղեկացված համաձայնության շրջանակը 17
13.02. Տեղեկացված համաձայնության ընթացքը 18

13.03. Ենթակաների և ուսանողների տեղեկացված համաձայնություն 19
13.04. Տեղեկացված համաձայնեցում երեխաների հետ 19
13.05. Խաբեությունը հետազոտության մեջ 20
13.06 Ձայնագրության տեխնոլոգիայի օգտագործումը 20
14. Հետազոտության պլանավորում, իրականացում և տարածում 20
14.01. Պլանավորում և իրականացում 21
14.02. Երկակի հարաբերություն 21
14.03. Հետազոտության հնարավորությունների փոխանցում 22
14.04. Օժանդակության առաջարկում հետազոտության մասնակիցներին 22
14.05. Հետազոտության մասին հաշվետվություն 22
14.06. Տվյալների տարածում 23
15. Հեղինակային իրավունք 24
16. Հրատարակման ընթացք 24
16.01. Հրատարակման ձեռագրերի ներկայացում 24
16.02. Տպագրման տվյալների կրկնօրինակում 25
16.03. Խմբագիրների պարտավորություններ 25
17. Գրախոսների պարտավորություններ 26
18. Կրթություն, ուսուցում և կրթական ծրագրերի կառավարում 26
18.01. Կրթություն և ուսուցում 26
18.02. Կրթական ծրագրերի կառավարում 27
19. Մենթորություն 27
20. Հսկողություն 28
21. Պայմանագրային և խորհրդատվական ծառայություն 28
22. Ամերիկյան կրթական հետազոտական ասոցիացիայի կապվածությունը էթիկայի ստանդարտներին 29
22.01 Քաջատեղյակություն էթիկայի բանաձևից 29
22.02. Դիմագրավում էթիկայի հարցերին 29
22.03. Կողմերի արդար վերաբերմունքը էթիկայի վեճերին 29
22.04. Հաշվետվություն այլոց բռնությունների մասին էթիկայի հանդեպ 29
22.05. Անհիմն դժգոհություններ 30
22.06. Համագործակցում էթիկայի հանձնաժողովների հետ 30

Ներածական

Ամերիկյան կրթական հետազոտական ասոցիացիայի (այսուհետ՝ ԱԿՀԱ) Էթիկայի Կոդեքսը առանձնացնում է նորմերի համակարգ, որի հիման վրա կրթական ոլորտի հետազոտողները ստեղծում են իրենց մասնագիտական և գիտական աշխատանքները: Կոդեքսի նպատակն է ապահովել սկզբունքներ և օրենքներ, վերահսկելու կրթական ոլորտի հետազոտողներին հանդիպած մասնագիտական իրավիճակները: Դրա հիմնական նպատակն է անհատների և խմբերի բարեկեցությունն ու պաշտպանությունը, որոնց հետ աշխատում են կրթական ոլորտի հետազոտողները: Այն նաև ծառայում է ուսուցանելու կրթական ոլորտի հետազոտողներին, ուսանողներին և այլոց, ովքեր օգուտ կքաղեն, հասկանալով էթիկայի սկզբունքները և ստանդարտները, որոնք ուղղորդում են կրթական հետազոտողներին իրենց մասնագիտական բնագավառում: Յուրաքանչյուր կրթական ոլորտի հետազոտողի անհատական պարտականությունն է ձգտել վարքային հնարավոր բարձր ստանդարտների՝ հետազոտության, կրթության, պրակտիկայի և հետազոտական ծառայություն մատուցելու մեջ:

Ընդհանուր դրույթներ

ԱԿՀԱ Էթիկայի Կոդեքսը սահմանում է սկզբունքներ և էթիկայի ստանդարտներ, որոնք մատնանշում են կրթական ոլորտի հետազոտողների մասնագիտական պարտավորություններն ու վարքագիծը: Ամենօրյա մասնագիտական գործողություններ կատարելիս տվյալ սկզբունքներն ու նորմերը պետք է ծառայեն որպես ուղեցույցեր: Նրանք հանդիսանում են կրթական ոլորտի հետազոտողների համար էթիկայի վարքագծի նորմատիվ դրույթներ և ապահովում են ուղեցույց կրթական հետազոտողներին այն հարցերի շուրջ, որոնց նրանք հանդիպում են իրենց մասնագիտական գործունեության մեջ: Ժամանակ առ ժամանակ ասոցիացիան վերանայում է էթիկայի բանաձևը՝ համոզվելու համար, որ բանաձևը շարունակում է ասպարեզում կրթել և ուղղորդել երբ առաջանում են նոր հարցեր և դժվարին իրավիճակներ:

ԱԿՀԱ էթիկայի բանաձևը կազմված է 5 սկզբունքներից և յուրահատուկ էթիկայի ստանդարտներից: Այս բանաձևը զուգակցվում է ԱԿՀԱ էթիկայի հանձնաժողովի քաղաքականության և ընթացակարգի հետ, որոնք ներկայացնում են ոչ էթիկական

Բողոքների արձագանքման ընթացակարգերը՝ այն հարցերի շուրջ, որոնք կապվածեն ԱԿՀԱ գործունեության և ծրագրերի հետ:
Բանաձևի սկզբունքները շարադրված են կրթական ոլորտի հետազոտողների համար, որպես մասնագիտական վարքագծի ամենաբարձր իդեալներ: Կրթական ոլորտի հետազոտողները հատուկ իրավիճակներում, երբեմն ստիպված են կշռադատել մրցակցությունը և միմյանց հակառակ սկզբունքները. նրանք ունեն պարտավորություն մասնակցելու իրենց գործունեությանը վերաբերող սկզբունքների քննարկմանը: Էթիկայի նորմերը կրթական ոլորտի հետազոտողների կողմից շարադրում են օրենքներ էթիկայի վարքագծի համար:
Էթիկայի ստանդարտների մեծ մասը մեծամասամբ գրված են դիմելու կրթական ոլորտի հետազոտողներին բազմազան ձևերով, և էթիկայի ստանդարտների դիմումը կարող է կոնտեքստից ելնելով լինել տարբեր: Էթիկայի նորմերը միտված են հարթելու կրթական ոլորտի հետազոտողների դիմաց ծառացած իրավիճակները, դրանք սպառիչ չեն:
ԱԿՀԱ էթիկայի բանաձևը ներառում է վարքագծային սկզբունքներ և ստանդարտներ կրթական հետազոտողների մասնագիտական ոլորտներում: Վարքագծային ստանդարտները կարող են նշված լինել օրենքով և կարգով, բայց դա ԱԿՀԱ-ի բարոյական վարքագծի ստանդարտների պարտականությունն է, նշումը կրթական ոլորտի հետազոտողների կողմից:
ԱԿՀԱ անդամակցությունը պարտավորեցնում է անդամերին հետևելու ԱԿՀԱ էթիկայի բանաձևին և ԱԿՀԱ էթիկայի հանձնաժողովի քաղաքականությանը և գործընթացին: Անդամները միանալով ասոցիացիային տեղեկացվում են պարտավորությունների և այն մասին, որ բանաձևին չհետևելը տանում է պատժամիջոցների կիրառման, ինչպես նաև անդամակցության դադարեցման:
ԱԿՀԱ-ն կարող է վերանայել բարոյական սխալների բողոքները, որոնք վերաբերում են ԱԿՀԱ գործունեությանը և ծրագրերին: Այլ անձիք, կարող են վկայակոչել այս էթիկայի ստանդարտները, հաշվի առնելով կրթական ոլորտի հետազոտողների մասնագիտական վարքագիծը:

Սկզբունքներ

Հետևյալ սկզբունքները ծառայում են ուղեցույց կրթական ոլորտի հետազոտողների տարբեր բնագավառներում գործունեության բարոյականության ուղղությունները որոշելու համար: Յուրաքանչյուրն էլ կարևոր է, միասին նրանք օրինակ են ծառայում մասնագիտական վարքագծի ամենաբարձր իդեալների համար:

Սկզբունք Ա: Մասնագիտական կարողություն

Կրթական ոլորտի հետազոտողները ձգտում են հասնելու իրենց աշխատանքային կարողության ամենաբարձր աստիճանի, նրանք ընդունում են իրենց կատարած փորձաքննության սահմանափակումները, և ձեռնարկում այն աշխատանքները, որոնց համար իրենք կրթությամբ, ուսուցմամբ և փորձով որակավորված են: Նրանք ընդունում են շարունակական կրթության կարիքը, մնալու մասնագիտորեն կարող, և գործածում են համապատասխան գիտական, կրթական, մասնագիտական, տեխնիկական և ադմինիստրատիվ անհրաժեշտ աղբյուրներ մասնագիտական

գործունեության կատարողականի հասնելու համար: Անհրաժշտության դեպքում նրանք խորհրդակցում են այլ մասնագետների հետ ի շահ իրենց ուսանողների, հետազոտության մասնակիցների և հաճախորդների:

Սկզբունք Բ: Բարեվարքություն

Կրթական ոլորտի հետազոտողները ազնիվ, արդար և հարգալից են իրենց մասնագիտական գործունեության մեջ՝ հետազոտության, կրթության, պրակտիկայի և ծառայությունների մատուցման մեջ: Կրթական ոլորտի հետազոտողները միտումնավոր չեն վտանգի ենթարկում մյուսների բարեկեցությունը: Կրթականոլորտի հետազոտողները իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնում են վստահելի և ապահով կերպով:

Սկզբունք Գ. Մասնագիտական, գիտական, կրթական պատասխանատվություն

Կրթական ոլորտի հետազոտողները հավատարիմ են մնում գիտական և մասնագիտական ամենաբարձր ստանդարտներին և պատասխանատվությամբ մոտենում իրենց աշխատանքին: Կրթական ոլորտի հետազոտողները կարևորում են հետազոտության մեջ հասարակական վստահությունը և մտահոգված են իրենց բարոյական վարքագծով և այլ կրթական հետազոտողների վարքագծով, որոնք կարող են վտանգի տակ դնել այդ վստահությունը: Կրթական ոլորտի հետազոտողները հասկանում են, որ իրենք ներկայացնում են մի համայնք և հարգալից են այլ կրթական հետազոտողների հանդեպ, անգամ երբ մասնագիտական գործունեության մեջ համաձայն չեն այդ տեսական, մեթոդաբանական կամ անձնական մոտեցումների հետ: Սակայն միշտ ջանալով լինել կոլեգիալ, կրթական ոլորտի հետազոտողները պետք է թույլ չտան կոլեգիալ լինելու ցանկությանը գերակշռելու իրենց իսկ ընդունած էթիկական վարքագծի պատասխանատվությանը: Երբ հարկ է լինում իրենք խորհրդակցում են իրենց գործընկերների հետ՝ կանխելու կամ խուսափելու ոչ բարոյական վարքագծից:

Սկզբունք Դ. Հարգանք մարդկանց իրավունքների, արժանապատվությանև տարբերությունների հանդեպ

Կրթական ոլորտի հետազոտողները հարգում են բոլոր մարդկանց իրավունքները, արժանապատվությունը, գնահատում բոլոր մարդկանց և հոգ տանում, որ աշխատանքում վնաս չպատճառվի: Իրենց հետազոտության մեջ իրենք հատուկ պարտավորություն ունեն պահպանելու հետազոտության մասնակիցների իրավունքները, բարեկեցությունը և արժանապատվությունը: Իրենք զգայուն են մշակութային, անձնական տարբերությունների հանդեպ կրթության և ուսումնառության մեջ և ծառայություն են մատուցում տարբերակիչ առանձնահատկություններով մի խումբ մարդկանց: Նրանք ձգտում են վերացնել խտրականությունները իրենց մասնագիտական գործունեության մեջ և չեն հանդուրժում խտրականություն հիմնված ռասայի, ազգային պատկանելիության, մշակույթի, ազգային ծագման, սեռի, սեքսուալ կողմնորոշման, ինքնության, տարիքի

կրոնի, լեզվի, հաշմանդամության, առողջական վիճակի, սոցիալտնտեսական դրության, ամուսնական կամ ընտանեկան կացության:
Կրթական ոլորտի հետազոտողները իրենց գործունեության մեջ ճանաչում են մյուսների իրավունքները, ունենալու արժեհամակարգ, վարքագիծ և կարծիք, որը տարբեր է իրենցից և վերաբերում են իրենց հարգանքով և արժանապատվորեն:

Սկզբունք Ե. Սոցիալական պատասխանատվություն

Կրթական ոլորտի հետազոտողները տեղյակ են իրենց մասնագիտական և գիտական պատասխանատվության մասին կազմաերպությունների և հասարակության հանդեպ, որտեղ նրանք ապրում ու աշխատում են: Նրանք կիսվում են իրենց գիտելիքներով հասարակության հետ՝ ի շահ հասարակության: Հետազոտություն սկսելով նրանք ձգտում են զարգացնել գիտական և կրթական գիտելիքը և ծառայեցնել այն հանրությանը:

Էթիկայի ստանդարտներ

1. Գիտական, կրթական և մասնագիտական ստանդարտներ

Կրթական ոլորտի հետազոտողները հավատարիմ են մնում հնարավոր ամենաբարձր ստանդարտներին, որոնք կշռադատված են և պատասխանատու են իրենց հետազոտության մեջ կրթական, պրատիկայի և ծառայությունների մատուցման գործունեության մեջ: Նրանք հիմնվում են գիտական, կրթական և մասնագիտական ստացված գիտելիքի վրա և գործում ազնվությամբ:

2. Կարողություն

Կրթական ոլորտի հետազոտողները անցկացնում են հետազոտություն, դասընթաց, պրակտիկա և ծառայություն մատուցում իրենց կարողությունների ներածին չափով՝ հիմնված իրենց կրթության, ուսուցման, ղեկավարած փորձի կամ համապատասխան մասնագիտական փորձառության վրա:
Կրթական ոլորտի հետազոտողները անցկացնում են հետազոտություն, դասընթաց, պրակտիկա և ծառայություն մատուցում նոր ոլորտներում կամ օգտագործում նոր ձևեր, բայց միայն իրենց կարողությունը տվյալ ոլորտում հաստատող մտածված քայլեր ձեռնարկելուց հետո:
Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր անցկացնում են հետազոտություն, դասընթաց, պրակտիկա և ծառայություն մատուցում քաջատեղյակ են իրենց գործունեության բնագավառի ներկայիս գիտական, կրթական և մասնագիտական ինֆորմացիային և շարունակական ճիգեր են գործադրում լավացնելու օգտագործվելիք կատարողական վարպետությունը:

3. Փորձաքննության օգուտը և վնասը

Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտության, դասընթացի, պրակտիկայի, ծառայության մատուցման և այլ գործունեության մեջ ներկայացնում են մասնագիտական վճիռներ կամ ներկայացնում են իրենց փորձաքննությունը, նրանք զգուշորեն և արդար ներկայացում են իրենց բնագավառները և փորձաքննության աստիճանները:

Կրթական ոլորտի հետազոտողները չեն ընդունում դրամաշնորհներ, պայմանագրեր, խորհրդատվություն կամ աշխատանքային համաձայնություններ անհատների, կազմակերպությունների կամ բարերարների կողմից, ովքեր ստիպում են նրանց հետ կանգնել էթիկայի բանաձևի նորմերին հավատարիմ մնալուց: Կրթական ոլորտի հետազոտողները անջատում են իրենց տվյալ գործունեությունից բոնություններ հայտնաբերելով և չկարողանալով դրանք փոխել:

Կրթական ոլորտի հետազոտողների գիտական, կրթական և մասնագիտական նկատառումները և գործողությունները կարող են ազդեցություն ունենալ այլոց կյանքի վրա; հետևաբար կրթական ոլորտի հետազոտողները կարող են զգոնություն պահպանել և հակառակ հանդես գալ անձնական, ֆինանսական, հասարակական, կազմակերպչական կամ քաղաքական գործոնների դեմ, որոնք տանում են իրենց ի վնաս գիտելիքի, փորձաքննության և ազդեցության:

Եթե հետազոտողները հասկանում են իրենց աշխատանքի վնասը և վատ ներկայացումը, իրենք խելամիտ քայլեր են ձեռնարկում շտկելու վնասը և վատ ներկայացումը:

4. Կեղծիք, սուտ և գրագողություն

Կրթական ոլորտի հետազոտողները չեն զբաղվում կեղծիքով, ստով և գրագողությամբ հետազոտության ներկայացումների, վերանայման կամ հետազոտության արդյունքների ներկայացման մեջ:

Կրթական ոլորտի հետազոտողները չեն կեղծում տվյալներ, տվյալների աղբյուրներ, հետազոտության արդյունքներ, պնդումներ կամ անձնական տվյալներ:

Իրենց հրատարակություններում, ներկայացումների, ուսուցման, պրակտիկայի և ծառայությունների մատուցման մեջ կրթական ոլորտի հետազոտողները հստակորեն ճանաչում են և վկայակոչում հեղինակին, երբ նրանք վերցնում են ուրիշի աշխատանքից տվյալները կամ նյութերը բառացիորեն, տպված, չտպված կամ հասանելի էլեկտրոնային տարբերակով:

Իրենց հրատարակություններում, ներկայացումների, ուսուցման, պրակտիկայի և ծառայությունների մատուցման մեջ կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են ճանաչում մյուսների աշխատանքի կարևորության մասին, անգամ երբ մեջբերված է բառացիորեն կամ փոփոխված է և նրանք չեն ներկայացնում մյուսների աշխատանքը որպես իրենցը, էական չէ տպագրված, չտպագրված կամ հասանելի էլեկտրոնային տարբերակով:

5. Վնասից խուսափում

Կրթական ոլորտի հետազոտողները խելամիտ քայլեր են ձեռնարկում խուսափելու վնասելուց մյուսներին՝ մասնագիտական աշխատանքի կառավարման ընթացքում: Երբ ի հայտ են գալիս վատ հանգամանքներ, կրթական ոլորտի հետազոտողները վնասի կրճատման շտապ քայլեր են ձեռնարկում, մինչև անգամ աշխատանքի դադարեցում:

6. Խտրականության ժխտում

Կրթական ոլորտի հետազոտողները խտրականություն չեն կիրառում իրենց աշխատանքում հիմնված ռասայի, էթնիկ պատկանելիության, մշակույթի, ազգային ծագման, սեռի, սեռական կողմնորոշման, ինքնության, տարիքի, կրոնի, լեզվի, հաշմանդամության, առողջական վիճակի, սոցիալտնտեսական դրության, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի կամ օրենքով հաստատված այլ կիրառելի հիմքերի վրա:

7. Շահագործման ժխտում

Անձնական, տնտեսական կամ մասնագիտական առավելության դեպքում էլ կրթական ոլորտի հետազոտողները չեն շահագործում մարդանց, ում հանդեպ իրենք ունեն իշխանություն կամ ղեկավարություն, ինչպիսիք են ուսանողները, ենթակաները, աշխատողները կամ հետազոտության մասնակիցները:
Կրթական ոլորտի հետազոտողները ուղղակիորեն չեն ղեկավարում կամ իշխում մարդկանց, որոնց հանդեպ իրենք ունեն ռոմանտիկ, սեռական կամ ընտանեկան հարաբերություն, ներառյալ ուսանողները, ենթակաները, աշխատողները կամ հետազոտության մասնակիցները:

8. Ոտնձգություններ

Կրթական ոլորտի հետազոտողները չեն մասնակցում մարդկանց հանդեպ ոտնձգություններին, ինչպես նաև ուսանողների, ենթակաների, աշխատողների, հետազոտության մասնակիցների հանդեպ հիմնված ռասայի, ազգային պատկանելիության, մշակույթի, ազգային ծագման, սեռի, սեքսուալ կողմնորոշման, ինքնության, տարիքի կրոնի, լեզվի, հաշմանդամության, առողջական վիճակի, սոցիալտնտեսական դրության, ամուսնական կամ ընտանեկան կացության վրա:
Ոտնձգությունները ներառում են ինտենսիվ կամ խիստ գործողություններ կամ մի շարք կայուն և համատարած գործողություններ, որոնք նվաստացնող, վիրավորական, նախատական են և ստեղծում են մասնագիտական, աշխատանքային և կրթական թշնամական միջավայր: Ոտնձգությունները կարող են լինել անտեղի, չափազանցված ուշադությունը և հարձակվողականությունը, կլինի խոսքային թե ոչ խոսքային: Սեռական ոտնձգությունները սեռական ցանկության առաջարկներն են, ֆիզիկական բնույթի ցանկությունները կամ խոսքային կամ ոչ խոսքային վարքագիծը, որն էլ բնության մեջ սեքսուալ է համարվում:

9. Աշխատանքային որոշումներ

Կրթական ոլորտի հետազոտողները պարտավորված են հավատարիմ մնալ էթիկայի ամենաբարձր նորմերին աշխատանք փնտրելիս, աշխատանքային հարաբերություններում որոշումներ կայացնելիս կամ պաշտոնից հեռանալ պլանավորելիս:

9.01. Աշխատանքային արդար պրակտիկա

Կրթական ոլորտի հետազոտողները աշխատանքի վերաբերող որոշումներ կայացնելիս ջանքեր չեն խնայում հավասար հնարավորություններ և արդար վերաբերմունք ստանալու բոլոր աշխատակիցների և ապագա աշխատակիցների համար: Նրանք խտրականություն չեն դնում վարձելիս,աջակցելիս, աշխատավարձի, վերաբերմունքի և այլ աշխատանքային իրավիճակներում հիմնված ռասայի, ազգային պատկանելիության, մշակույթի, ազգային ծագման, սեռի, սեքսուալ կողմնորոշման, ինքնության, տարիքի կրոնի, լեզվի, հաշմանդամության, առողջական վիճակի, սոցիալտնտեսական դրության կամ ամուսնական կամ ընտանեկան կացության կամ օրենքով հաստատված այլ կիրառելի հիմունքներով:
Մասնակցություն ունենալով աշխատանքին վերաբերող որոշումներին, կրթական ոլորոի հետազոտողները բավարարում են վարձելու, աջակցության, զբաղվածության և աշխատանքի ավարտի համար պահանջները, ամբողջապես շտապ ներկայացնում աշխատողներին և ապագա աշխատողներին:
Մասնակցություն ունենալով աշխատանքին վերաբերող որոշումներին, կրթական ոլորտի հետազոտողները պարտավոր են ծանոթ լինելու աշխատանքային արդար բանաձևին, ինֆորմացիայով կիսվելու աշխատակիցների հետ և աշխատակիցների համար արդար միջավայրում ապահովելու աշխատանքային պրակտիկա:
Մասնակցություն ունենալով աշխատանքին վերաբերող որոշումներին, կրթական ոլորտի հետազոտողները պարտավոր են ծանոթացնելու աշխատակիցներին եթե կան սղություններ հետազոտության և հրատարակման մեջ և պատկերավոր կերպով ներկայացնել հետազոտական և կրթական գործողությունները կրճատող հանգամանքները:

9.02. Աշխատողների իրավունքներ

Կրթական ոլորտի հետազոտողերը աշխատանք փնտրելիս արդար և ճշգրտորեն ներկայացնում են իրենց մասնագիտական որակավորումները և փորձառությունը: Ժամանակավոր կամ մշտական պաշտոնը թողնելիս կրթական ոլորտի հետազոտողները իրենց աշխատակիցներին անում են համապատասխան նկատողություն և հեռանալիս խելամիտ քայլեր ձեռնարկում՝ քչացնելու բացասական հույզերը:

10. Շահերի բախում

Կրթական ոլորտի հետազոտողները որտեղ հնարավոր է խուսափում են կամ վերջնական հանգուցալուծում են շահերի բախումները կամ շահերի բախման ի հայտ գալը: Շահերի բախում տեղի է ունենում, երբ կրթական ոլորտի հետազոտողների

անձնական, մասնագիտական, կամ ֆինանսական հետաքրքրությունները ետ են պահում իրենց մասնագիտական աշխատանքը անաչառ կերպով կատարելիս: Կրթական, հետազոտողները հետազոտության, կրթության, պրակտիկայի և ծառայությունների մատուցման մեջ ուշադիր են իրավիճակների հանդեպ, որոնք կարող են բախում առաջացնել և իհարկե ձեռնարկում են համապատասխան քայլեր՝ կանխելու կամ հանգուցալուծելու բախումը:

10.01. Մասնագիտական ստանդարտների կապվածություն

Կրթական ոլորտի հետազոտողները, անկախ իրենց կամ իրենց աշխատակիցների և հաճախորդների անձնական կամ ֆինանսական շահերից, հավատարիմ են գիտական, կրթական և մասնագիտական նորմերին տվյալների վերլուծության, մեկնաբանման, հետազոտական հաշվետվությունների, ուսուցման, մասնագիտական ներկայացման կամ կրթական հետազոտական գիտելիքի հանրային տարածման, և համապատասխան պայմանագային, խորհրդակցական կամ ծառայությունների մատուցման գործողությունների ճանաչմանը և իրականացմանը:

10.02. Հայտնաբերում

Կրթական ոլորտի հետազոտողները հայտնաբերում են ֆինանսական օժանդակության աղբյուրներ և անձնական կամ մասնագիտական հարաբերություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ շահերի բախման աշխատողի կամ հաճախորդի, մասնագիտական աշխատանքային բարերարների և հասարակության՝ գրավոր կամ բանավոր հաշվետվություններում:

10.03. Խուսափում անձնական շահերից

Կրթական ոլորտի հետազոտողները չեն օգտագործում կամ չեն ձգտում հասնել շահի գաղտնի ինֆորմացիայից կամ նյութերից, մինչ չունենան դա անելու իրավասություն կամ մինչ ինֆորմացիան չդառնա հասարակայնորեն հասանելի:
Կրթական ոլորտի հետազոտողները զբաղվածության կամ հաճախորդների հետ հարաբերության մեջ չեն ձգտում ունենալ շահ սեփականատիրական կամ գաղտնի ինֆորմացիայից կամ նյութից, առանց գործատուի կամ հաճախորդի թույլատվության:

10.04. Աշխատավայրում որոշումների կայացում

Կրթական ոլորտի հետազոտողները իրենց աշխատավայրում համապատասխան քայլեր են ձեռնարկում խուսափելու շահերի բախումներից և զգուշորեն զննում են պոտենցիալ կողմնակալ հարաբերությունները: Հետազոտության, կրթության, պրակտիկայի կամ ծառայությունների մատուցման մեջ պոտենցիալ կողմնակալ հարաբերություններ ներառված են, բայց չեն սահմանափակվում այս իրավիճակներով, այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են ընտանեկան, բիզնես, ընկերական հարաբերությունները կամ մարդիկ, որոնց հետ կրթական ոլորտի հետազոտողները ունեցել են բախումներ և անհամաձայնություններ:

10.05. Աշխատավայրից դուրս որոշումների կայացում

Աշխատավայրից դուրս կրթական ոլորտի հետազոտողները մասնագիտական գործողություններում, ովքեր ունեն կողմնակալ հարաբերություններ ձեռնապահ են մնում քննարկումների և որոշումների կայացման մասնակցություններից, որոնց հատկացնում են օգուտներ անհատների և կառույցների կողմից: Այդ կողմնակալ հարաբերություններն են 1.ընթացիկ կամ ապագա աշխատանք կազմակերպությունում, որը կդիտվի որոշումներից օգուտի ակնկալում: 2. տվյալ կազմակերպության կամ կառույցի ներկայիս ծառայությունը՝ որպես ղեկավար կամ անդամ, կարող է դիտարկվել որոշումներից օգուտի ակնկալում: 3.ներկայիս կամ ապագա աշխատանքը նույն կազմակերպությունում կամ կառույցում, որտեղ անհատը կարող է օգուտ ունենալ որոշումից:4.Ունենալով ամուսին, ընկեր, կամ բարեկամ, ով կարող է որոշումից օգուտ ակնկալել: Կամ 5.ունենալով ներկայումս բիզնեսի կամ մասնագիտական գործընկեր, հետազոտության աշխատակից, ենթակա, աշխատող կամ ուսանող, ով որպես անհատ կարող է օգուտ ունենալ տվյալ որոշումից:

11. Հանրային հաղորդակցություն

Կրթական ոլորտի հետազոտողները հավատարիմ են մնում հանրային հաղորդակցության մասնագիտական ամենաբարձր ստանդարտներին, իրենց մասնագիտական ծառայությունների, լիազորագրերի, փորձաքննության, աշխատանքային հաջողությունների կամ հրատարակությունների մեջ, անկախ այն բանից այդ հաղորդակցությունները ամբողջությամբ իրենցն են թե կիսով չափ:

11.01. Հետազոտողների հաղորդակցություն

Կրթական ոլորտի հետազոտողները ձեռնարկում են քայլեր ապահովելու բոլոր հասարակական կապերի ճշգրտությունը: Նման հասարակական կապերը ներառում են, բայց չեն սահմանափակում տեղեկատվական ցանկերը, ինքնակենսագրականները, գովազդը, գրքույկները կամ տպագրված նյութերը, հարցազրույցները կամ լրատվական նյութերը, օրինական վարույթներում հայտարարությունները, դասախոսությունները կամ հանրային բանավոր կերպով արված ներկայացումները կամ այլ տպագրված նյութերը:
Կրթական ոլորտի հետազոտողները չեն անում հանրային հայտարարություններ, որոնք սուտ են, խաբուսիկ, ապակողմնորոշիչ կամ խարդախ: Նման գործողությունները ներառում են բայց չեն սահմանափակվում կեղծ կամ խաբուսիկ հայտարարություններով իրենց կամ այլոց 1.կրթության, փորձառության կամ կարողության 2.ակադեմիական աստիճանների 3.լիազորագրերի 4.ինստիտուցիոն կամ կազմակերպության կողմնապահությունների 5.ծառայությունների 6.վճարումների կամ 7.հայտարարությունների ու հետազոտության արդյունքների վերաբերյալ: Կրթական ոլորտի հետազոտողները չեն անում կեղծ կամ խաբուսիկ հայտարարություններ, որոնք հիմք են հանդիսանում գիտական կամ կրթական կամ այլ մասնագիտական ծառայություն տրամադրելիս:

Երբ կրթական ոլորտի հետազոտողները անում են հայտարարություն, մեկնաբանություն կամ ցուցմունք հանրությանը, լրատվությանը, կառավարությանը կամ այլ կառույցներին, իրենք ձեռնարկում են նախազգուշական քայլեր՝համոզվելու, որ 1.հայտարարությունները հիմնված են հետազոտությունների, գրականության և պրակտիկայի վրա և որ 2.հայտարարությունները հաստատված են էթիկայի բանաձևի կողմից:
Աշխատելով մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, ցանցային լրատվության և այլ հաղորդակցական կամ գովազդում, լրատվության մեջ, կրթական ոլորտի հետազոտողները գիտակցում են ապագայում շահերի բախումները կամ այդ կոնֆլիկտային ելույթները և հավատարիմ են մնում մասնագիտական ազնվությանը:

11.02. Հայտարարություններ այլ մարդկանց կողմից

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր աշխատանքի են վերցնում ուրիշներին՝ հայտարարություններ ստեղծելու կամ հասարարական հայտարարություններ անելու համար, որոնք խթանում են իրենց աշխատանքի արդյունքները, մասնագիտական ծառայությունների մատուցումը կամ այլ գործողություններ են ձեռնարկում՝ պահպանելու համար նման հայտարարությունների պատասխանատվությունը:
Կրթական ոլորտի հետազոտողները ջանքեր են գործադրում կանխելու մարդանց խաբուսիկ հայտարարություններ անելը՝ իրենց մասնագիտական հետազոտության, կրթության, և պրակտիկայի գործողությունների վերաբերյալ, ում իրենք չեն ընդունել որպես աշխատակիցներ, տպագրողներ, բարերարներ, կազմակերպության հաճախորդներ և լրատվության անդամներ:

12. Գաղտնիություն

Կրթական ոլորտի հետազոտողները երաշխավորում են, որ գաղտնի ինֆորմացիան պահպանվի: Նրանք դա անում են համոզվելու համար, որ հետազոտության ամբողջականությունն ու հետազոտության մասնակիցների հաղորդակցությունն ապահովված է, և ապահովելու՝ կրթական, ուսումնական, պրակտիկայի և ծառայությունների մատուցումից ստացված զգայուն ինֆորմացիայի պահպանությունը: Գաղտի ինֆորմացիա հավաքելիս, կրթական ոլորտի հետազոտողները հաշվի են առնում ինֆորմացիայի վաղեմությունը, ինչպես նաև դրա պոտենցիալ դերը հասարակական արխիվներում կամ այլ հետազոտողների կողմից ինֆորմացիայի ստուգումը:

12.01. Գաղտնիության պահպանում

Գաղտնիության համաձայնագրերը իմացվում և հաստատվում են կրթական ոլորտի հետազոտողների և այլոց շրջանում, գիտական, կրթական և մասնագիտական հարաբերությունների մեկնարկից հետո և հանգամանքների պահանջով ժամանակառ ժամանակ վերանայվում են: Տես նաև 12.03
Կրթական ոլորտի հետազոտողները նախազգուշական քայլեր են ձեռնարկում գաղտնի ինֆորմացիայի պահպանման համար, որը վերաբերում է հետազոտության մասնակիցներին, ուսանողներին, աշխատողներին, հաճախորդներին և այլոց, երբ գաղտնիությունն ապահովված է կամ կա գաղտնիության ակնկալում:

Գաղտնի ինֆորմացիան՝ ապահովված հետազոտության մասնակիցների, ուսանողների, աշխատակիցների, հաճախորդների կողմից, նույն կերպ էպահպանվում կրթական ոլորտի հետազոտողների կողմից, անգամ երբ չկա օրիանական պահպանություն կամ արտոնություն, որը պահանջում է այդպեսվարվել: Կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են գաղտնի ինֆորմացիանև թույլ չեն տալիս գաղտնի կերպով ստացված ինֆորմացիան օգտագործել այնպիսի կերպով, որ կարող է անարդարացիորեն վարկաբեկել գաղտնի կերպով ստացված ինֆորմացիան հետազոտության մասնակիցներին, ուսանողներին, աշխատողներին, հաճախորդներին և այլոց:

Գաղտնի հիմունքներով տրամադրված ինֆորմացիան գաղտնի ինֆորմացիա է համարվում անգամ տրամադրողի մահից հետո:

Գաղտնի քննարկումների, գործողությունների, դերերի ամբողջականությունը կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են այնտեղ, որտեղ կիրառելի են հետևյալ ձևերով՝ մասնագիտական հանձնաժողովներ, վերանայող հանձնաժողովներ կամ խորհրդատվական խմբեր:

Կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են ուսանողների գրառումների, կատարողականի տվյալների, անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը, անկախ այն բանից բանավոր է թե գրավոր, տրված ակադեմիական խորհրդակցության, ղեկավարական թե խորհրդակցական համատեքստում:

Հետազոտության անդամները կամ ուսումնական խնբերը, համագործակցող կազմակերպությունները պահպանում են գաղտնիություն՝ մուտք ունենալով գաղտնի ինֆորմացիային: Համոզվելու համար, որ մուտքը դեպի գաղտնի ինֆորմացիա սահմանափակված է, գլխավոր հայտնագործողները, այլ հետազոտողները, ադմինիստրատորները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր պահպանելու գաղտնիությունը հատուկ տվյալների պահպանման մեթոդիկայի և ծրագրերի միջոցով:

Անձնական ինֆորմացիա օգտագործելով այլ մարդկանց կողմից հավաքագրված անհատների, կազմակերպությունների մասին, կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը: Ինֆորմացիան համարվում է անձնական, երբ անհատը կարող է ենթադրել, որ ինֆորմացիան չի դառնա հանրային իր անձնական ներկայացուցիչների կողմից:

Կրթական ոլորտի հետազոտողները տեղեկանում են իրենց ամբողջի մասին և օգտագործում մեթոդներ, ընթացակարգեր և քայլեր, որոնք կարող են բարձրացնել գաղտնիության պահպանությունը, ներառյալ օրինական դրույթներինտիրապետումը:

12.02. Գաղտնիության սահմաններ

Կրթական ոլորտի հետազոտողները տեղեկացվում են ամբողջապես օրենքների, կանոնների և հանգամանքների մասին, որոնք կարող են սահմանափակել գաղտնիության երաշխիքները: Նրանք երաշխավորում են ամբողջական գաղտնիություն և տեղյակ պահում երաշխիքային սահմանափակումների մասին հետազոտության մասնակիցներին, ուսանողներին, աշխատակիցներին, և այլոց, հաստատված էթիկայի ստանդարտների կողմից, շարադրված 12.02-ում:

Կրթական ոլորտի հետազոտողները կարող են հանդիպել չսպասված հանգամանքների, որտեղ ծանոթանում են հետազոտության մասնակիցների,

ուսանողների, աշխատակիցների, հաճախորդների և այլոց մասին ինֆորմացիայի հետ, որ կարող է սպառնալիք հանդիսանալ նրանց կյանքի կամ առողջության համար: Նման դեպքերում կրթական ոլորտի հետազոտողները կշռադատում են գաղտնիության երաշխիքների կարևորությունը էթիկայի բանաձևի այլ հանգամանքների, վարքագծային ստանդարտների, կիրառելի օրենքների հետ: Գաղտնիություն չի պահանջվում զննությունների ժամանակ հասարակական վայրերում, հասարակական գործողություններում կամ այլ պարամետրերում, որտեղ օրենքի կողմից չեն պահպանվում անձնական տիրույթ ներթափանցման կանոնները: Նույն կերպ գաղտնիություն չի պահանջվում հասարակայնորեն հասանելի տվյալներից ինֆորմացիայի ստացումից:

12.03. Գաղտնիության և դրա սահմանների քննարկում

Կրթական ոլորտի հետազոտողները, երբ մարդկանց հետ հաստատում են գիտական, կրթական կամ մասնագիտական հարաբերություններ, նրանք քննարկում են 1. գաղտնիության տեղին սահմանափակումները և 2. իրենց մասնագիտական աշխատանքից ստացված ինֆորմացիայի տեսանելի օգուտները: Գաղտնիության քննարկումը, եթե անհնար և անարդյունավետ է, դառնում է հարաբերությունների սկիզբ՝ այնուհետև կարող են առաջանալ նոր հանգամանքներ:

12.04. Ինֆորմացիայի հնարավոր օգուտների սպասում

Երբ հետազոտությունը պահանջում է պահպանել անձնական նյութերը տվյալների բազաներում և գրառումների համակարգման կենտրոններում, կրթական ոլորտի հետազոտողները հանում են դրանք մինչև հասարակայնորեն հասանելի կդառնան: Երբ անձնական նյութերի հանումը կամ քողարկումը անհնար է, կրթական ոլորտի հետազոտողները քայլեր են ձեռնարկում, որոշելու՝ որ անհատապես ճանաչելի անհատների համապատասխան համաձայնությունը ձեռք բերվի, մինչև նրանք կտեղափոխեին տվյալները կամ կվերանայեին ուրիշների հավաքած տվյալները: Երբ հաջորդ օգտագործման համար հնարավոր չէ ձեռք բերել համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները, միայն լուրջ հանգամանքներից ելնելով քայլեր են ձեռնարկում համոզվելու համար, որ կա մուտք այդ տվյալներին, և տեղում օգտագործողները համաձայն են պահպանելու համաձայնագրերի գաղտնիությունը: Երբ գաղտնի ինֆորմացիան, որը վերաբերում է հետազոտության մասնակիցներին, հաճախորդներին կամ և այլ ծառայություններ ստացողներին, մուտք է գործում նյութերի բազա կամ տվյալների համակարգ, հասանելի մարդկանց առանց կողմերի համաձայնությամբ, կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են մյուսների անհատականությունը, չներառելով անձնական նյութեր, կամ այլ ձևեր կիրառելով՝ քողարկում են կամ ղեկավարում անհատների հայտնաբերումը:

12.05. Գաղտնի ինֆորմացիայի էլեկտրոնային փոխանցում և պահպանում

Կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են գաղտնի տվյալները, ինֆորմացիան, կամ հաղորդակցությունը, պահպանում, ուղարկում կամ փոխանցում համակարգչային ցանցով կամ այլ էլեկտրոնային տարբերակով: Կրթական ոլորտի հետազոտողները ուշադիր են գաղտնիության պահպանման խնդիրներին և տեխնոլոգիայի օգտագործման մեջ տվյալներն ու նյութերը ղեկավարելիս, ինչպիսիք են համակարգչային ցանցը, որ կարող է բացել իրենց մասնագիտական, գիտական կամ կրթական համագործակցությունը չթույլատրված մարդկանց հետ կամ անուշադրության հայտնաբերմանը:

12.06. Աղբյուրների անանունություն

Կրթական ոլորտի հետազոտողները իրենց գրառումներում, դասախոսություններում, կայքերում կամ այլ հասարակական լրատվական գաղտնի, անձնական ինֆորմացիան չեն մերկացնում՝ իրենց հետազոտության մասնակիցների, ուսանողների, անհատների, կազմակերպությունների հաճախորդների կամ իրենց ծառայության այլ ստացողների վերաբերյալ, որը ստացվում է իրենց աշխատանքի ընթացքում, եթե կա ստացված համաձայնություն անհատների կամ օրինական լիազորված ներկայացուցիչների կողմից:
Երբ գաղտնի ինֆորմացիան օգտագործվում է գիտական, կրթական և մասագիտական ներկայացումների մեջ, կրթական ոլորտի հետազոտողները քողարկում են հետազոտության մասնակիցերի, ուսանողների, անհատների, կազմակերպությունների հաճախորդների կամ այլ ծառայություններ ստացողների ինքնությունը:

12.07. Նվազագույնի հասցնել անձնական տիրույթ ներթափանցումը

Կրթական ոլորտի հետազոտողները, նվազագույնի հասցնելու համար անձնական տիրույթ ներթափանցումը, ներառում են գրավոր և բանավոր հայտարարություններում, խորհրդատվություններում և հասարակական հարաբերություններում միայն պատշաճ ինֆորմացիա, ինչի համար էլ հաղորդակցությունը նախատեսված էր:
Կրթական ոլորտի հետազոտողները քննարկում են գաղտնի ինֆորմացիան կամ գնահատողական տվյալները, որը վերաբերում է հետազոտության մասնակիցներին, ուսանողներին, ենթականերին, աշխատակիցներին կամ հաճախորդներին, միայն համապատասխան գիտական, կրթական և մասնագիտական նպատակներով և միայն այն մարդկանց հետ, ովքեր լիազորված են նման հարցեր քննարկելու:

12.08. Գաղտնի ինֆորմացիայի պահպանում

Կրթական ոլորտի հետազոտողները խելամիտ քայլեր են ձեռնարկում համոզվելու համար, որ գրառումները, տվյալները, ինֆորմացիան գաղտնի կերպով պահպանված են էթիկայի բանաձևի կողմից հաստատված, ճանաչելով այն, որ գրառումների, տվյալների, ինֆորմացիայի սեփականատիրությունը կարող է ղեկավարվել օրենքով կամ ինստիտուցիոնալ սկզբունքներով:

Կրթական ոլորտի հետազոտողներն այնպես են ծրագրում, որ գրառումների, տվյալների, ինֆորմացիայի գաղտնիությունը պահպանվում է, անգամ կրթական ոլորտի հետազոտողի մահվան, հաշմանդամության, կամ պաշտոնի հրաժարականի դեպքում:
Երբ կրթական ոլորտի հետազոտողները փոխանցում են այլ մարդկանց կամ կազմակերպություններին գաղտնի գրառումներ, տվյալներ կամ ինֆորմացիա, նրանք ստանում են հավաստիացում, որ գրառումների, տվյալների և ինֆորմացիայի ստացողները նույնպիսի քայլեր կձեռնարկեն գաղտնիությունը պահպանելու համար:
Կրթական ոլորտի հետազոտողները խելամիտ քայլեր են ձեռնարկում համոզվելու համար, որ իրենք պահպանում են հետազոտության մասնակիցների ինքնությունը, հետազոտության արդյունքների տարածման մեջ, գաղտնիության հավաստիացումների պայմանով:

13. Տեղեկացված համաձայնություն

Տեղեկացված համաձայնությունը բնակչության մասին գիտական հետազոտության հիմնարար բարոյական դրույթ է: Կրթական ոլորտի հետազոտողնորը մարդուն չեն ներառում որպես հետազոտության մասնակից առանց մասնակցի կամ լիազորված ներկայացուցչի տեղեկացված համաձայնության, բացառությամբ այս Կոդեքսումնշված դեպքերի՝ Կետ 13.01: Կրթական ոլորտի հետազոտողները գիտակցում են հնարավոր անտեղի ազդեցությունը կամ թեթև ճնշումները հետազոտության մասնակիցների վրա, որը կարող է ստացվել հետազոտողների փորձառությունից և նրանք այդ հանգամանքը հաշվի են առնում տեղեկացված համաձայնության ընթացակարգը նախագծելիս:

13.01. Տեղեկացված համաձայնության շրջանակը

Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտություն անցկացնելիս հետազոտության մասնակիցներից կամ նրանց լիազորված աձանց կողմից ստանում են և փաստաթղթավորված կամ բանավոր համաձայնությունը 1.երբ հետազոտության մասնակիցների կողմից տվյալները հավաքագրված են հաղորդակցության, փոխազդեցության կամ միջամտության միջոցով; կամ 2.երբ հետազոտության մասնակիցների վարքագիծը փակ է, որտեղ անհատը կարող է ակնկալել, որ ոչ մի դիտարկում ու հաշվետվություն տեղի չի ունենա: Կրթական հետազոտողները համաձայնությունը ստանում են հետազոտության մասնակիցների համար ըմբռնելի և պատշաճ կերպով:
Կրթական ոլորտի հետազոտողները անհրաժեշտություն չունեն ստանալու համաձայնությունը, երբ 1. Հետազոտության մասնակիցների համար հետազոտությունը միայն մինիմալ ռիսկեր է պարունակում և 2. հետազոտությունը պրակտիկորեն չի կարող անցկացվել, երբ տեղեկացված համաձայնություն պահանջվի: Կրթական ոլորտի հետազոտողները գիտակցում են, որ համաձայնությունից հրաժարվելը պահանջում է ինստիտուցիոնալ վերահսկիչ խորհրդի կողմից հաստատում կամ, նման խորհրդի բացակայության դեպքում, երաշխավորագիր՝ հետազոտության էթիկայի հարցում փորձառություն ունեցող հեղինակավոր այլ մարմնից: Նման հանգամանքների դեպքում ցանկացած անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը պետք է պահպանվի ոչ այլ կերպ քան շարադրված է

12.02 կետում:
Կրթական ոլորտի հետազոտողները կարող են իրականացնել հետազոտությունը հասարակական վայրերում կամ առանց համաձայնագիր ստանալու օգտագործել հասարակայնորեն հասանելի ինֆորմացիա անհատների վերաբերյալ: Եթե, նման հանգամանքներում կրթական հետազոտողները կասկածներ ունեն ինչ որ ինֆորմացիայի համաձայնագրի անհրաժեշտության վերաբերյալ, նրանք խորհրդակցում են ինստիտուցիոնալ վերահսկիչ խորհրդի հետ կամ այդ մարմնի բացակայության դեպքում՝ հետազոտության էթիկայի հարցում փորձառություն ունեցող այլ հեղինակավոր մարմնի հետ, նախքան հետազոտության իրականացումը: Սկսելով հետազոտություն խոցելի խմբերի հետ, ինչպիսիք են երեխաները, երիտասարդները, հատուկ կարիքներով ուսանողները, գաղթականները, կրթական ոլորտի հետազոտողները հատուկ հոգ են տանում երաշխավորելու, որ հետազոտության բնույթը հասկացվի և որ համաձայնությունն ու հավանությունը բռնի չէ: Բոլոր այլ դեպքերում, կրթական հետազոտողները հավատարիմ են մնում13.01- ում շարադրված ստանդարտներին:
Կրթական ոլորտի հետազոտողները իրազեկ են կիրառելի պետական կանոնակարգերին և որտեղ անհրաժեշտ է՝ ինստիտուցիոնալ վերահսկիչ խորհրդի պահանջներին՝ ստանալու հետազոտության տեղեկացված համաձայնագիրը:

13.02. Տեղեկացված համաձայնության ընթացքը

Երբ պահանջվում է տեղեկացված համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները համաձայնության են գալիս հետազոտության մասնակիցների կամ օրինական լիազորված անձանց հետ, որը հստակեցնում է հետազոտության նպատակը և հետազոտողի պարտավորությունները, նախքան հետազոտությանն անցկացումը:
Երբ պահանջվում է տեղեկացված համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները օգտագործում են գրավոր կամ բանավոր լեզուն, որը հասկանալի է և հարգալից հետազոտության մասնակիցների կամ օրիանական լիազորված անձանց համար:
Երբ պահանջվում է տեղեկացված համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են հետազոտության մասնակիցների կամ օրինական լիազորված անձանց հետազոտությանը վերաբերող ցանկացած հարցեր, ցանկացած ժամանակ հնչեցնելու հնարավորությամբ՝ հետազոտությանը մասնակցելու ընթացքում և հետո:
Երբ պահանջվում է տեղեկացված համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները տեղեկացնում են հետազոտության մասնակիցներին կամ օրինական լիազորված անձանց հետազոտության նպատակի մասին, նրանք նշում են,որ իրենց մասնակցությունը կամ շարունակական մասնակցությունը կամավորական է, նրանք ծանոթացնում են մասնակիցների հատուկ դրույթնրին, որոնք կարող ենազդել նրանց մասնակցելու ցանկության վրա և բացատրում հետազոտության այլ ասպեկտներ և պատասխանում ապագա մասնակիցերի հարցերին: Կրթական ոլորտի հետազոտողները նաև բացատրում են, որ մասնակցությունից հրաժարվելը հետազոտության մեջ որևէ տույժ չի պարունակում, և ներկայացնում հրաժարվելու տեսանելի հետևանքները: Կրթական ոլորտի հետազոտողները հստակորեն

քննարկում են գաղտնիությունը և համաձայնելու դեպքում գաղտնիության սահմանափակման չափը՝ շարադրված 12.02-ում:
Երբ պահանջված է տեղեկացված համաձայնագիր, կրթական ոլորտի հետազոտողները գրառումներ են պահպանում ստացված համաձայնագրի վերաբերյալ: Նրանք գիտակցում են, որ համաձայնագիրը ընթացք է, որը ներառում է գրավոր ու բանավոր համաձայնեցում:
Կրթական ոլորտի հետազոտողները կարևորում են հաձնարարությունները, որ տվել են հետազոտության մասնակիցներին, որպես տեղեկացված համաձայնագրիընթացքի մի մաս, բացի անսպասելի հանգամանքներից, որոնք պահանջում են այլ եղանակ՝ շարադրված 12.02-ում:

13.03. Ենթակաների և ուսանողների տեղեկացված համաձայնություն

Իրենց կազմակերպությունում հետազոտություն սկսելով՝ կրթական ոլորտի հետազոտողները հետազոտության մասնակիցների հետ, որոնք ուսանողներ կամ ենթականեր են, հատուկ հոգ են տանում պաշտպանելու մասնակիցներին հետազոտությանը իրենց մասնակցությամբ պայմանավորված առաջ եկած պաշտոնի իջեցմամբ կամ հեռացման անբարենպաստ հետևանքներից: Տես նաև 7-ը և 14.02-ը:

13.04. Տեղեկացված համաձայնեցում երեխաների հետ

Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտություն սկսելով երեխաների հետ ստանում են ծնողի կամ օրինական լիազորված անձի համաձայնությունը: Կրթական ոլորտի հետազոտողները կարող են հրաժարվել ստանալու ծնողի կամ օրինական լիազորված անձի համաձայնագիրը, երբ 1. հետազոտությունը պարունակում է մինիմալ ռիսկային գործոնոր հետազոտության մասնակիցների հանդեպ և 2. հետազոտությունը պրակտիկորեն տեղի ունենալ չի կարող, որտեղ համաձայնագիրը պահանջված է, կամ 3. երբ ծնողի կամ օրինական լիազորված անձի համաձայնագիրը պարտադիր պահանջ չէ երեխայի պաշտպանության համար:
Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտություն սկսելով երեխաների հետ երեխայից ստանում են մասնակցության համաձայնագիր, որքանով որ երեխաները հնարավորություն ունեն այդ համաձայնագիրը տրամադրելու, բացառությամբ այն հանգամանքների, երբ համաձայնագիրը պահանջված չէ, շարադրված է 13.01: Կրթական ոլորտի հետազոտողները գիտակցում են, որ երեխայի, ծնողի կամ օրինական լիազորված անձի համաձայնագիրը պահանջում են հաստատում համապատասխան խորհրդի կողմից, կամ դրանց բացակայության դեպքում այլ պաշտոնատար մարմինների կողմից:
Նման հանգամանքներում, անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը պետք է պահպանվի, ինչպես և շարադրված է 12.02-ում:

13.05. Խաբեությունը հետազոտության մեջ

Կրթական ոլորտի հետազոտողները խաբուսիկ ձևեր չեն կիրառում, եթե չիմանան, որ դրանց օգտագործումը ռիսկային չէ հետազոտության մասնակցների համար, որ դրանց օգտագործումը հաստատված է ուսումնառության գիտական, կրթական, ուսումնառության և կիրառական նշանակությամբ, և հավասար արդյունավետ, այլընտրանքային գործողություններով, որոնք անհնար է ներառեն խաբեություններ, և քանի դեռ հաստատում չեն ստացել համապատասխան խորհրդի կողմից, կամ դրանց բացակայության դեպքում՝ այլ պաշտոնատար մարմինների կողմից:
Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտության մասնակիցներին չեն խաբում հետազոտության այն դրույթների վերաբերյալ, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց մասնակցության վրա, օրիակ ֆիզիկական ռիսկերը, անհարմարությունը և կամ էմոցիոնալ տհաճ փորձառությունը:
Երբ խաբեությունը հետազոտության կառուցվածքի մի մասն է, կրթական ոլորտի հետազոտողները փորձում են ուղղել սխալ պատկերացումը ոչ ուշ, քան հետազոտության ավարտն է:
Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտությունը սկսելու համար հազվադեպ են ստիպված լինում իրենց ինքնությունը քողարկել, առանց որի պրակտիկորեն անհնար է: Նման հանգամանքներում կրթական ոլորտի հետազոտողները սկսում են հետազոտությունը, այն պարագայում, երբ մասնակիցների համար չկան ռիսկային գործոններ և երբ նրանք ստացել են նման կերպով անցկացնելու համաձայնեցում վերանայման խորհրդի կողմից, կամ դրանց բացակայության դեպքում այլ պաշտոնատար մարմինների կողմից: Այս հանգամանքներում գազտնիությունը պետք է պահպանվի ինչպես նշարադրված 12.02-ում:

13.06 Ձայնագրության տեխնոլոգիայի օգտագործումը

Կրթական ոլորտի հետազոտողները ստանում են տեղեկացված համաձայնագիր հետազոտության մասնակիցների, ուսանողների, ենթակաների, հաճախորդների կամ այլոց կողմից, լուսանկարչության, տեսաժապավենների, նկարահանումների և որևէ ձևով, մինչև որ այս գործողությունները չներառեն պարզ, բնական տեսարաններ հասարակական վայրերում և դա ճնշող չէ, որ ձայնագրությունը պետք է օգտագործվի այնպես, որ անձնական ինքնությանը վնաս չպատճառվի:

14. Հետազոտության պլանավորում, իրականացում և տարածում

Կրթական ոլորտի հետազոտողները պարտավորված են առաջ տանելու հետազոտության շիտակությունը և համոզվել, որ իրենք հետազոտության մեջ ենթարկվում են էթիկայի նորմերին՝ պլանավորման, իրականացման և տարածման մեջ: Նրանք դա անում են գիտելիքի բարձրացման, արդյունքների ապակողմնորոշիչ լինելու հնարավորությունը քչացնելու և հետազոտության մասնակիցների իրավունքները պաշտպանելու համար:

14.01. Պլանավորում և իրականացում

Հետազոտության պլանավորման և իրականացման մեջ, կրթական ոլորտի հետազոտողները քչացնում են արդյունքների ապակողմնորոշիչ լինելու հնարավորությունը:
Կրթական ոլորտի հետազոտողները քայլեր են ձեռնարկում հետազոտության մասնակիցների իրավունքների և բարեկեցության հետազոտությունից բխող պաշպանությունն իրականացնելու համար:
Կրթական ոլորտի հետազոտողները իրենց հետազոտության մեջ չեն խրախուսում գործողությունները և վարքագիծը, որը կարող է հետազոտության մասնակիցների համար հանդիսանալ առողջության կամ կյանքի համար սպառնալիք:
Հետազոտության պլանավորման և իրականացման ժամանակ կրթական ոլորտի հետազոտողները խորհրդակցում են փորձառուների հետ հետախուզվող կամ վնասներ կրած հատուկ բնակչության վերաբերյալ:
Հետազոտության պլանավորման մեջ կրթական ոլորտի հետազոտողները սպասում են, նախատեսում օրինական պահանջմունքներ և հանգամանքներ, որոնք կարող են հետազոտության մասնակիցերի գաղտնիության երաշխավորումը դժվարեցնել: Տես 12.12. Կրթական ոլորտի հետազոտողնորը համապատասխան և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում տվյալների ապահովության և արդյունքների տարածման ռիսկերի նվազումը պահպանելու համար: Տես 12.01 և 12.08:
Հետազոտության պլանավորման և իրականացման ժամանակ կրթական ոլորտի հետազոտողները կշռադատում են էթիկական թույլատրելիությունը՝ շարադրված էթիկայի բանաձևի կողմից: Երբ էթիկական լավագույն պրակտիկան անհասկանալի է, կրթական ոլորտի հետազոտողները խորհրդակցում են վերանայման խորհրդի հետ կամ այլ պաշտոնատար մարմինների հետ:
Կրթական ոլորտի հետազոտողները իրենց ղեկավարությամբ պատասխանատու են հետազոտության իրենց կամ ուրիշների բարոյական վարքագծի համար: Այլոց ղեկավարությամբ աշխատողները պատասխանատու են սեփական բարոյական վարքագծի համար:

14.02. Երկակի հարաբերություն

Հետազոտության պլանավորման մեջ կրթական ոլորտի հետազոտողները ընտրում են հետազոտության մասնակիցներին, ում հետ չունեն այլ հարաբերություններ (օրինակ, ուսուցիչ, ղեկավար, մենթոր կամ գործատու): Եթե հետազոտության հնարավորությունները կամ հանգամանքները պահանջում են հետազոտության այնպիսի մասնակիցների ընտրություն, ում հետ ունեն նմանատիպ հարաբերություն, հետազոտողները հոգ են տանում համոզվելու, որ մասակցության համաձայնեցումը կամավոր է և ոչ բռնի: Կրթական ոլորտի հետազոտողները նաև հատուկ հոգ են տանում, որ օգտագործված, հավաքագրված, տպված ինֆորմացիան, որպես հետազոտության մի մաս, այնպես տնօրինվի, որ հետազոտության մասնակիցները չենթարկվեն ռիսկի: Տես 7 և 13.03:

14.03. Հետազոտության հնարավորությունների փոխանցում

Երբ ոչ հետազոտական գործողությունների ընթացքում, կրթական ոլորտի հետազոտողները որոշում են, որ ուզում են սկսել հետազոտություն, որը նախապես նախատեսված չէր, ապագա հետազոտության մասնակիցներին տեղեկացնում են իրենց մտադրությունների մասին և քայլեր են ձեռնարկում՝ համոզվելու, որ հետազոտությունը էթիկայի սկզբունքների համաձայն է, հատկապես գաղտնիության և տեղեկացված համաձայնությանը վերաբերողները: Նման հանգամանքներում կրթական ոլորտի հետազոտողները ձգտում են հասնել հաստատման համապատասխան խորհրդի կողմից, կամ նման խորհրդի բացակայության դեպքում՝ երաշխավորագիր, հեղինակավոր մարմնի կողմից հետազոտության էթիկայի փորձաքննության հետ միասին:

14.04. Օժանդակության առաջարկում հետազոտության մասնակիցներին

Կրթական ոլորտի հետազոտողները չեն առաջարկում անտեղի ֆինանսական օժանդակություններ հետազոտության մասնակիցների մասնակցությանը հասնելու համար, հատկապես երբ դա կարող է ոչ պատշաճ կերպով ազդել նրանց մասնակցության որոշման վրա: Կրթական ոլորտի հետազոտողները կարող են խթաններ տրամադրել այնքանով, որքանով ռեսուրսները բավարարում են:

14.05. Հետազոտության մասին հաշվետվություն

Կրթական ոլորտի հետազոտողները պատասխանատու են իրենց հետազոտությունները ճանաչելի դարձնելու հարցում, բացի այն դեպքերից, երբ անսպասելի հանգամանքներ են առաջանում իրենց հսկողությունից դուրս, սեփականատիրական համաձայնության հարցերով ղեկավարների, պայմանագիր ստորագրած անձանց, հաճախորդների հետ, ովքեր արգելում են տարածումը:
Կրթական ոլորտի հետազոտողները իրենց հետազոտությունները ներկայացնելիս ներկայացնում են ամբողջական արդյունքները և տվյալներում բացթողումներ չեն անում: Նրանք ներկայացնում են արդյունքները, անկախ այն բանից, թե իրենց կարծիքը համընկնում է դրանց հետ թե ոչ:
Կրթական ոլորտի հետազոտողները հոգ են տանում ստանալ բոլոր արդյունքների որակավորումները և իրենց հետազոտության մեկնաբանումը: Կրթական ոլորտի հետազոտողները հայտնաբերում են ենթադրությունները, տեսությունները, մեթոդները, միջոցառումները և հետազոտության ծրագրերը, որոնք կարող են կրել աշխատանքի գտածոները և մեկնաբանությունները:
Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտությունը ներկայացնելիս ներկայացնում են արդյունքներ՝ համահունչ հետազոտության մասնակիցների տեղեկացված համաձայնագրերի հետ, և ուրիշ համաձայնագրեր, փնտրվող կայքեր կամ տվյալներ մուտք գործելու համար:
Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտությունը ներկայացնելիս տրամադրում են մանրամասն ինֆորմացիա, այնպես որ մյուսները կարողանան տվյալներն վերլուծության ենթարկել, եթե հատուկ հանգամանքների բերմամբ մուտք ունենան դեպի այդ տվյալներ:
Եթե կրթական ոլորտի հետազոտողները ակնառու սխալներ են հայտնաբերում իրենց

ներկայացրած կամ հրատարակած տվյալներում, ապա համապատասխան քայլեր են ձեռնարկում դրանք ուղղելու, հրատարակված վրիպակները ուղղելու համար: Կրթական ոլորտի հետազոտողները հետազոտությունը ներկայացնելիս դիտարկումեն ապագա կոնֆլիկտային իրավիճակները կամ շահերի բախումները, որոնք կարողեն ազդեցություն ունենալ հետազոտության վրա:

Կրթական ոլորտի հետազոտողները նշում են իրենց գրավոր փաստաթղթերում ֆինանսական աջակցության աղբյուրներն ու բարերարներին: Հատուկ հանգամանքներում, կրթական ոլորտի հետազոտողները կարող են մերժել՝ նշել հատուկ բարերարների անունները, եթե պահպանում են բարերարի նպատակային համարժեք և ամբողջական նկարագիրը:

Կրթական ոլորտի հետազոտողները հատուկ հոգ են տանում, որ զգուշորեն ներկայացվեն այլոց կրթաթոշակների արդյունքները, օգտագործելով ճիշտ ինֆորմացիա և մեջբերումներ, այլոց աշխատանքը՝ հրատարակությունների, ուսումնառության, պրակտիկայի և ծառայությունների մատուցումը ներկայացնելիս:

14.06. Տվյալների տարածում

Կրթական ոլորտի հետազոտողների կանոնավոր պրակտիկա է տվյալների և գործին վերաբերող փաստաթղթերի տարածումը: Կրթական ոլորտի հետազոտողները իրենց տվյալները հասանելի են դարձնում նախագծի ավարտից հիմնական հրատարակումից հետո՝ այլ հետազոտողների ստուգման նպատակով, բացի ղեկավարների, պատվիրատուների կամ հաճախորդների հետ սեփականատիրական համաձայնագրերից, որոնք արգելում են նման մուտքերը, երբ անհնար է տարածել տվյալներ, որևէ օգտակար նպատակով:

Կրթական ոլորտի հետազոտողները տվյալներ տարածելով համապատասխան քայլեր են ձեռնարկում տվյալների գաղտնիությունը և հետազոտության մասնակիցների ինքնությունը պահպանելու համար: Երբ համապատասխան ապագա գործածությունը հարկադրում է մուտք սեփականատիրական տվյալներին, հետազոտողները քայլեր են ձեռնարկում համոզվելու, որ տվյալները հասանելի են համապատասխան սահմանափակումներով, որտեղ կարող է պահպանվել հետազոտության մասնակիցների գաղտնիությունը: Տես նաև 12.04 և 12.08:

Կրթական ոլորտի հետազոտողները տվյալները տարածում են որպես հետազոտության պլանի ամբողջական մաս, երբ տվյալների տարածումը հնարավոր է:

Կրթական ոլորտի հետազոտողները տվյալները տարածում են հետազոտության մասնակիցների հետաքրքրությունների համաձայն և պահպանում են իրենց տրված ինֆորմացիայի գաղտնիությունը: Նրանք պահպանում են տվյալներիգաղտնիությունը, անկախ նրանից օրինապես պահանջված է թե ոչ, հանում են անձնական սեփականատիրական իրավունքից նախքան տարածելը և եթե անհրաժեշտ է կիրառում հայնաբերման, խուսափման տեխնիկա: Երբ սեփականատիրական իրավունքով տվյալները տարածվում են, կրթական ոլորտի հետազոտողները քայլեր են ձեռնարկում համոզվելու, որ մուտք գործում է միայն սահմանափակ հանգամանքներում, երբ օգտատերերը համաձայն են պահպանել տվյալների գաղտնիությունը՝ համաձայն նախնական հանձնառությունների: Կրթական ոլորտի

հետազոտողները, որոնք դեմ չեն արխիվներում տվյալներ տեղադրելուն, հետազոտությանը վերաբերող տվյալները և փաստաթղթերը միառժամանակ հասանելի են պահում արդյունքների հրատարակումից և տարածումից հետո և տարածում տվյալները համաձայն 14.06-ի:
Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր օգտագործում են ուրիշներից վերցրած տվյալներ հետագա անալիզի համար, հստակորեն գիտակցում են սկզբնական հետազոտողների ներդրումը:

15. Հեղինակային իրավունք

Կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են, որ բոլոր նրանք, ովքեր ունեցել են նշանակալի ներդրում մտավոր արդյունքի մեջ, նշվում են որպես հեղինակներ:
Կրթական ոլորտի հետազոտողները պատասխանատվություն ու երաշխիք են ապահովում, ներառյալ հեղինակային իրավունքի երաշխիք, միայն իրենց կատարած աշխատանքի համար կամ ինչին իրենց մասնակցությունն են ունեցել:
Կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են, որ հիմնական հեղինակությունը, հեղինակների ցանկը և հրատարակության այլ օգուտները՝ հիմնված լինեն ներգրավված անհատների գիտական կամ մասնագիտական ներդրումների վրա, անկախ իրենց կարգավիճակից: Կրթական ոլորտի հետազոտողները սահմանում են այդ որոշումների չափանիշը գրելու գործընթացի սկզբին:
Ուսանողը նշվում է որպես հիմնական հեղինակ այն բազմահեղինակ հրատարակության համար, որը բխել է ուսանողի ատենախոսությունից կամ թեզից:

16. Հրատարակման ընթացք

Կրթական ոլորտի հետազոտողները հավատարիմ են մնում էթիկայի ամենաբարձր ստանդարտներին, ներառյալ հմտության ստանդարտները, որպես հեղինակներ կամ խմբագիրներ հրատարակման և վերանայման պրոցեսներին մասնակցելիս:

16.01. Հրատարակման ձեռագրերի ներկայացում

Բազմահեղինակության դեպքում կրթական ոլորտի հետազոտողները խորհրդակցում են մյուս հեղինակների հետ մինչև հրատարակման համար նախատեսված աշխատանքի ներկայացնելը և հաստատում ներկայացման համար փոխադարձ համաձայնագրեր:

Ներկայացնելով բնագրերը պրոֆեսիոնալ ամսագրերին, գրքերի շարքերին, հրատարակված գրքերին, կրթական ոլորտի հետազոտողները առաջին հայցը շնորհում են այդ հրատարակմանը, բացառությամբ երբ պարզ քաղաքականությունը թույլատրում է բազում համաձայնագրեր: Կրթական ոլորտի հետազոտողները չեն տրամադրում բնագրերը երկրորդ հրատարակմանը, մինչև որ պետական որոշում չստացվի առաջին հրատարակումից կամ մինչև բնագրերից չհրաժարվեն: Կրթական ոլորտի հետազոտողները ներկայացնելով բնագրերը պրոֆեսիոնալ ամսագրերին, գրքերի շարքերին, հրատարակված գրքերին, կարող են նախապես բնագրից հրաժարվել, մինչև կկազմվի պետական համաձայնություն:
Կրթական ոլորտի հետազոտողները չեն տալիս գրքի բնագիրը տարբեր հրատարակողներին, մինչ հրատարակողների համաձայնագրի ուղեցույցները թույլ կտան իրականացնելու պրակտիկան: Երբ կրթական ոլորտի հետազոտողները պայմանագիր են ստորագրում, նրանք կարուղ են չհրաժարվել բնագրի հրատարակումից մինչև որ դա անելու համար խելամիտ պատճառ չլինի:
Կրթական ոլորտի հետազոտողները, գրքի բնագիրը հանձնելով, հրատարակման խմբագրի պահանջով նյութերը դարձնում են հասանելի՝ հետաքրքրող հարցեր տալու համար, որոնք ծագում են վերանայման ընթացքում:

16.02. Տպագրման տվյալների կրկնօրինակում

Կրթական ոլորտի հետազոտողները հրատարակման համար չեն ընտրում նախկինում հրատարակված աշխատանքներ, մինչև որ այն չտպվի ցիտելով առաջին հրատարակողին և համաձայնեցված չլինի համապատասխան օրենքներով և համաձայնագրերով:
Երբ կրթական ոլորտի հետազոտողները հրատարակում են տվյալներ, որոնք եղել են այլ տեղերում հրատարակված, նրանք երախտագիտությամբ են վերաբերում նման հրատարակումներին:

16.03. Խմբագիրների պարտավորություններ

Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները ազնիվ են հրատարակման ստանդարտների դիմումների մեջ և գործում են առանց համակրանքի կամ քինախնդրության: Ինչպես խմբագրերը, այնպես էլ կրթական ոլորտի հետազոտողները գիտակցում են ապագա կոնֆլիկտներն ու շահերի բախումները:
Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները համոզվում են գրախոսման պրոցեսի գաղտնիության մեջ և ղեկավարում գրասենյակի խմբագրային աշխատակազմը ներառյալ ուսանողներին, պրակտիկայի հետ համապատասխան, որն ապահովում է գաղտնիությունը:
Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները ստիպված են հրատարակել բոլոր հրատարակման համար նախատեսված բնագրերը, եթե հիմնական սխալներ են հայտնաբերվում համաձայնեցումից հետո:
Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները համոզվում են հեղինակների անանունության մեջ մինչ

թույլատրություն կստանան գրախոսներից բացահայտելու իրենց ինքնությունը: Հետազոտողները համոզվում են, որ իրոնց աշխատակազմը հարմարեցված է այս պրակտիկային:
Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները համոզվում են հեղինակների անանունության մեջ, մինչև ոչ բնագիրը կհաստատվի հրատարակել կամ մինչ ամսագրի գործող պրակտիկան կդառնա այլ կերպ:
Լինելով ամսագրերի կամ գրքի շարքի խմբագիրներ՝ կրթական ոլորտի հետազոտողները քայլեր են ձեռնարկում բոլոր բնագրերի ժամանակավոր գրախոման համար և անհապաղ պատասխանում գրախոսական վիճակի մասին հարցումներին:

17. Գրախոսների պարտավորություններ

Կրթական ոլորտի հետազոտողները հավատարիմ են մնում էթիկայի ամենաբարձր ստանդարտներին:

Վերանայելով հրատարակման համար նախատեսված նյութերը, դրամաշնորհային օգնությունը կամ այլ գնահատողական նպատակները, կրթական ոլորտի հետազոտողները պահպանում են գործընթացի գաղտնիությունը և նման ինֆորմացիայի տրամադրողների համապատասխան իրավունքները:
Կրթական ոորտի հետազոտողները հայտնաբերում են շահերի բախումները և նվազեցնում գրախոսելու աշխատանքային հրավերները, որտեղ շահերի բախումներն անխուսափելի են:
Երբ առաջարկ են ստանում գրախոսելու նախկինում իրենց գրախոսած բնագրեր, գրքի շարքեր, կրթական ոլորտի հետազոտողները հրավիրողին տեղեկացնում են, որ իրենք խնդրում են ապահովել վերագնահատում:

18. Կրթություն, ուսուցում և կրթական ծրագրերի կառավարում

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր ծառայում են որպես կրթական ծրագրերի դասավանդողներ, դասընթացավարներ, ադմինիստրատորներ, կատարում են իրենց պարտականությունները գիտակցաբար, հմտաբար և ազնվությամբ: Նրանք օրինակ են ծառայում և բարոյական վարքագծով նպաստում իրենց ուսանողների և կրթվողների համար:

18.01. Կրթություն և ուսուցում

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր պատասխանատու են կրթության և ուսուցման համար, կատարում են իրենց պարտավորությունները համապատասխան վարպետությամբ և գիտելիքով կամ ստանում են համապատասխան ուսուցում: Կրթական ոլորտի հետազոտողները ճշգրիտ ինֆորմացիա են տրամադրում իրենց դասընթացների ժամանակ:
Կրթական ոլորտի հետազոտողերը որոշումներ են կայացնում գրքերի, դասընթացների բովանդակության, պահանջների և գնահատման վերաբերյալ, հատկապես հիմնվելով կրթական քննադատության վրա, առանց ֆինանսական նկատառումներից ելնելու:
Կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են ուսուցում և ղեկավարում իրենց կրթական օգնականներին, խելամիտ քայլեր ձեռնարկում, համոզվելու, որ այդ անձինք

իրականացնում են իրենց կրթական պարտականությունները պատասխանատվությամբ, վարպետորեն և բարոյականորեն:

Կրթական ոլորտի հետազոտողները թույլ չեն տալիս անձնական թշնամանք և ինտելեկտուալ տարբերություններ գործընկերների հետ, կանխորոշում են ուսանողների կամ ենթակաների մուտքը դեպի այդ գործընկերներ կամ խառնվելը ուսանողների, ենթակաների ուսումնական գործընթացին, ակադեմիական առաջընթացին և մասնագիտական զարգացմանը:

18.02. Կրթական ծրագրերի կառավարում

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր պատասխանատու են կրթական և ուսումնառական ծրագրերի համար, ձգտում են ապահովել, որ ծրագրերը գրագետ կերպով են մշակված, տրամադրում են համապատասխան փորձառություն, և համապատասխանում են ծրագրի բոլոր նպատակներին:

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր պատասխանատու են կրթական և ուսումնառական ծրագրերի համար, ձգտում են ապահովել, որ կա ճշգրիտ նկարագիր՝ ծրագրային բովանդակության, ուսումնառության նպատակների, պահանջների, որոնք պետք է բավարարվեն ծրագրի ավարտի համար:

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր պատասխանատու են կրթական և ուսումնառական ծրագրերի համար, քայլեր են ձեռնարկում ապահովելու համար, որ շրջանավարտ օգնականները և ժամանակավոր դասախոսները ունեն համապատասխան և պահանջված գիտելիք՝ դասընթացներ վարելու և ուսուցչի անհրաժեշտ հմտություններ՝ ուսանողի սովորելու գործընթացը համակարգելու համար:

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր պատասխանատու են կրթական և ուսումնառական ծրագրերի համար, պարտավորված են ապահովել, որ իրենց շրջանավարտները սովորեն էթիկա՝ որպես իրենց մասնագիտական նախապատրաստականի մի մաս:

19. Մենթորություն

Կրթական ոլորտի հետազոտողները, ովքեր ծառայում են որպես ուսուցիչներ կատարում են իրենց պարտականությունները գիտակցաբար, գրագիտությամբ և շիտակությամբ: Նրանք նպաստում և բարոյական վարքագծի օրինակ են ծառայում ուսանողների համար:

Կրթական ոլորտի հետազոտողները իրականացնում են իրենց ուսանողների բարեկեցությունն ու առաջընթացը և քայլում նրանց հետաքրքրություններին ընդառաջ:

Կրթական ոլորտի հետազոտողները իրենց ուսանողներին տեղեկացնում են իրենց աշխատանքի բարոյական նորմերի մասին և համապատասխան էթիկայի ամենաբարձր ստանդարտների՝ աջակցում նրանց մասնագիտական գործողություններն իրականացնելիս:

20. Հսկողություն

Կրթական ոլորտի հետազոտողները ապահովում են համապատասխան ուսումնառություն և հսկողություն իրենց ուսանողների, ենթակաների համար և քայլեր ձեռնարկում տեսնելու համար, որ այդ մարդիկ իրականացնեն իրենց գործողությունները պատասխանատվությամբ, գիտակցաբար և բարոյականորեն: Կրթական ոլորտի հետազոտողները իրենց ուսանողներին, աշխատակիցներին, ենթականերին, տալիս են այն հանձնարարականները, որ այդ մարդիկ կարող են կատարել ինքնուրույն կամ համապատասխան մակարդակի ղեկավարմամբ՝ հիմնվելով իրենց կրթության, ուսումնառության, փորձառության վրա:
Կրթական ոլորտի հետազոտողները ազնվորեն գնահատում են իրենց ուսանողների, ենթակաների, աշխատակիցների կատարողականը և արդար ու ամբողջական գնահատում իրականացնում:

21. Պայմանագրային և խորհրդատվական ծառայություն

Կրթական ոլորտի հետազոտողները ընդունում են դրամաշնորհներ, պայմանագրեր, խորհրդատվություններ, միայն երբ քաջատեղյակ են էությանը, մեթոդիկային, տեխնիկային, որը պատրաստվում են կիրառել և ծրագրում են համագործակցություն համապատասխան փորձառություն սկսելու համար:
Կրթական ոլորտի հետազոտողները ընդունելով դրամաշնորհներ, պայմանագրեր, խորհրդատվություններ, իրենց մասնագիտական աշխատանքի արդյունքները հիմնում են համապատասխան ինֆորմացիայի և տեխնիկայի վրա:
Երբ ֆինանսական օժանդակությունը հաստատվում է, որպես դրամաշնորհներ, պայմանագրեր, խորհրդատվություններ, կրթական ոլորտի հետազոտողները քայլեր են ձեռնարկում խոստացված աշխատանքը ժամկետի մեջ հանձնելու համար:
Կրթական ոլորտի հետազոտողները ընդունում են դրամաշնորհներ, պայմանագրեր, խորհրդատվություններ, ճշգրտորեն փաստաթղթերով հաստատում են և պահպանում իրենց մասնագիտական և գիտական աշխատանքը:
Հանձն առնելով փաստաթղթային պայմանավորվածություն հետազոտության, խորհրդատվության, կամ այլ ծառայությունների համար, կրթական ոլորտի հետազոտողները հստակեցնում են հաճախորդի հետ՝ անհատ կամ կազմակերպության գործի նպատակը հավանական չափով: Այս պարզաբանումը ներառում է ծառայության նպատակների իրագործում, մատուցված ծառայության հնարավոր օգուտներ, հնարավորություններ կրթական ոլորտի հետազոտողների ապագա աշխատանքային օգուտներ՝ կրթական կամ հրատարակման նպատակներով, ցուցակ՝ ծառայությունների մատուցման համար:

22. Կապվածությունը էթիկայի ստանդարտներին

Կրթական ոլորտի հետազոտողները պարտավորված են դիմագրավել, ուղղել, փորձել լուծում տալ բարոյական խնդիրներին, որոնք ծագում են այս էթիկայի բանաձևում:

22.01 Քաջատեղյակություն էթիկայի բանաձևից

Կրթական ոլորտի հետազոտողները պարտավոր են ծանոթ լինել այս էթիկայի բանաձևին և այլ կիրառելի էթիկայի բանաձևերին և դրանց գործադրմանը կրթական ոլորտի հետազոտողների աշխատանքներում: Տեղեկատվության պակասը և էթիկայի ստանդարտների սխալ հասկանալը ինքնին պաշտպանություն չէ ոչ բարոյական վարքագիծ կատարելուց:

22.02. Դիմագրավում էթիկայի հարցերին

Երբ կրթական ոլորտի հետազոտողները վստահ չեն, որ տվյալ իրավիճակը կամ գործողությունը խախտում է, թե ոչ էթիկայի բանաձևը, նրանք խորդրդակցում են այլ կրթական հետազոտողների հետ, ովքեր ինֆորմացված են էթիկայի հարցերի մասին կամ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպիսիք է ինստիտուցիոնալ վերանայման խորհուրդը: Նրանք նաև կարող են խորհրդակցել ԱԿՀԱ էթիկայի ասոցիացիայի հետ՝ որպես ինֆորմացիայի աղբյուր, առաջնորդություն:
Երբ կրթական ոլորտի հետազոտողները կանգում են երկընտրանքի առջև, որտեղ կա կոնֆլիկտ էթիկայի բանաձևում նշված էթիկայի ստանդարտների և օրենքների կամ օրինական պահանջարկների միջև, նրանք տեղյակ են պահում բանաձևի հանձնառության մասին և քայլեր ձեռնարկում կոնֆլիկտը հանգուցալուծելու համար՝ խորհրդակցելով գործընկերներիի, պրոֆեսիոնալ կազմակերպությունների կամ ԱԿՀԱ էթիկայի ասոցիացիայի հետ:

22.03. Կողմերի արդար վերաբերմունքը էթիկայի վեճերին

Կրթական ոլորտի հետազոտողները չեն տարբերակում կամ փոխհատուցում մարդուն հիմնված իր բարոյականության բողոքի վրա:
Կրթական ոլորտի հետազոտողները չեն տարբերակում կամ փոխհատուցում մարդուն հիմնված իր բարոյականության խախտման մասնակցության վրա: Սա չի բացառում գործողությունների ձեռնարկումը հիմնված բարոյականության բողոքի արդյունքի վրա:
Կրթական ոլորտի հետազոտողերը կարող են հաշվի առնել ուրիշների հաստատած բարոյականության խախտումները մասնագիտական որոշումների կայացման և այս անհատների մասին դատողություններ անելու ժամանակ:

22.04. Հաշվետվություն էթիկայի հանդեպ այլոց խախտումների մասին

Երբ կրթական ոլորտի հետազոտողները հիմնարար պատճառ ունեն հավատալու համար, որ եղել է բարոյական նորմի խախտում այլ կրթական ոլորտի հետազոտողի կողմից, նրանք փորձում են լուծել հարցը տվյալ անհատի ուշադրությունը գրավելով դրա վրա, երբ ոչ պաշտոնական հանգուցալուծումը ամենից համապատասխանն է և

հնարավորը: ԱԿՀԱ էթիկայի ասոցիացիայի ուղղորդմամբ, ԱԿՀԱ գործողությունների և ծրագրերի կառավարման հարցերով նման գործողությունը կարող է ներառել խորհրդատվություն:

22.05. Անհիմն դժգոհություններ

Կրթական ոլորտի հետազոտողները չեն մշակում կամ խրախուսում էթիկայի դժգոհություններ, որոնք մակերեսային են և հատուկ միտված են վնասելու ենթադրյալ խախտումները, քան պաշտպանելու կրթական հետազոտություն մասնագիտությունը և հանրությանը, որին ծառայում են:

22.06. Համագործակցում էթիկայի հանձնաժողովների հետ

Կրթական ոլորտի հետազոտողները համագործակցում են էթիկայի հետազոտություններում, քայլերում և ազդում են Ամերիկյան Կրթական Հետազոտական Ասոցիացիայի որոշումների կայացման վրա:

Նշումներ: Ամերիկյան Կրթական Հետազոտական Ասոցիացիայի էթիկայի ստանդարտների մասին վերանայված հրատարակությունը հիմնված է 1992թ.-ին ընդունված էթիկայի ստանդարտների վրա և վերանայված է 1996թ.-ին և 2002թ.-ին: Նոր հրատարակությունը այսուհետ կոչվում է էթիկայի Կոդեքս: Այս հրատարակությունը մշակված և ձևավորված է էթիկայի ստանդարտներն ավելի հասանելի դարձնելու, վերացնելու ուղղորդումը, որը չի վերաբերում կրթական ոլորտի հետազոտողների անհատական վարքագծին կամ ընդլայնելու և պարզեցնելու նախկին հրատարակությունները: Այս վերանայումը մեծապես շահել է և կազմվելԱմերիկյան Սոցիոլոգիական ասոցիացիայի 1997թ.-ի էթիկայի կոդեքսից և Ամերիկյան Հոգեբանական Ասոցիացիայի Հոգեբանների Էթիկայի Սկզբունքներից և Վարքագծային Բանաձևի 1992թ.-ի տարբերակից: Այս բանաձևերի լեզուն թույլատրությամբ է օգտագործվում ԱԿՀԱ բանաձևում:

Անգլերենից հայերեն թարգմանությունը կատարվել է
Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից
CERC © 2015
Աղբյուրը՝ Educational Researcher, Vol. 40. No. 3. Pp.145-156
DOI: 10.3102/0013189X11410403
©2011 AERA.http://er.aera.net